արքայ, և նորա ուրախութեամբ ընկալեալ ընթերցաւ. դովեաց զհրովարտակն և զգրեանս Դատաւորին, խոստացեալ կատարումն տալ գործոյն, և մեկնեցաւ։

Եւ 'ի վաղիւ անդր ըստ աղդարարելոյ նորին չոքան 'ի Դատարան և մատուցին զգրեանս Դատաւորին, և նորա ընթերցեալ համբուրեաց զհրովարտակն, և յանձն առ սիրով կատարել զհրաման Արքային, և զկնի բանից մեկնեցան անտի։ Յետոյ եկեալ Դպրապետին 'ի վանս խնդրէր հաճել զկամս Դատաւորին, և Յովհաննէս վարդապետ ետ նմա 3000 դահեկան. և յորդորեաց զնա կատարել զգործն. զի Պատրիարքունք և աղդապետք 'ի քէն պահանջեն ասէր զայս գործ։ Սակայն միտք Դատաւորին հայէր 100,000 դահեկանի, և սոքա ոչ կարէին տալ աւելի քան զ10,000։ Քաղաքապետն լուեալ զդալուստ Յովհաննու և զգնալ նորին 'ի դատարան, դժուարեցաւ, և կոչեալ զԹարդմանն յանդիմանէ զնա, և յետ երկուց աւուրց ըստ խնդրոյ նորին գնաց առ նա Յովհաննէս վարդապետ, և 'ի մեղադիր լինել նորա թէ ընդէ՞ր ոչ եկիր առիս, զի ես եմ ասէր երկրին, արար նմա պատասխանի, թէ ճարտարապետ Արքայի Գրիգոր Դալֆայ տարաւ զիս առ Եպարքոսն, և նորա տուեալ զփակեալ գրեանս պատուիրեաց գնալ յերուսաղէմ և մատուցանել առ Դատաւորն, և առնուլ 'ի նմանէ զպատասխանն, և ինձ պարտ էր կատարել զհրաման նորին, այլ 'ի կոչելդ փոյթ եկի առ քեզ. Քաղաքապետն յայտ արար զգրելն իւր առ Բդեշխն զդալստենէ նորին, եւ պատուիրեաց Դատաւորին չտալ Իլամ մինչեւ եկեսցէ պատասխան գրոյն։ Յելս Հոկտեմբերի եհաս Ոստիկան ոք տասն արամբք 'ի Դամասկոսէ, պատուէր առ Դատաւորն չտալ Իլամ Հայոց մինչ ցգալուստ Բդեշխին, կամք Քաղաքապետին էր իջեւանել նոցա 'ի վանս Հայոց, այլ արգել Դատաւորն։ Եւ զկնի աւուրց եկն եհաս Կուսակալն յերուսաղէմ ըստ սովորութեան ('ի 5 Դեկտեմբերի)։ Եւ յետ առնլոյ զնահմանեալ հարկս իւր, մատեան առ նա Յովհաննէս վարդապետ և այլք, և առաջի եդին նմա զգործ հրովարտակին վասն Իլամի և պարտուց, և ետուն նմա 25,000 դահեկան, եւ 2 ժամացոյց 'ի ձեռն Արապկերցի Ղուկաս աղայի յազգէ Հայոց, սեղանաւորի նորին, 2500 և մի մա-